Բայց և այնպէս կառավարութիւնը հաստատեց ներկայացուած նախագիծը, որովհետև պատմական կամ զեղագիտական ուսումնասիրութիւններ անելու ժամանակ չկար։ Հաստատեց ժամանակաւոր կերպով, մինչև Սահմանադիր Ժողով։

Յուլիս 5-ին հաստատուեց Հայաստանի քաղաքացիութեան հետևեալ օրէնքը.

«1. Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի է ճանաչւում ամէն մի նախկին ռուսա և տաճկահպատակ, որը սոյն օրէնքի հրատարակման ժամանակ ապրում է Միացեալ Հայաստանի սահմաններում։

2. Միացեալ Հայաստանի սահմաններում ապրող նախկին ռուսա կամ տաճկահպատակներն իրաւունք ունեն սոյն օրէնքի հրատարակման օրից երեք ամսւայ ընթացքում, հրաժարուել Հայաստանի Հանրապետութեան հպատակութիւնն ընդունելուց, ինդիր ներկայացնելով տեղական հաշտարար դատաւորին։

Ծանօթութիւն. 1. Հայկական ծագում ունեցող զինապարտ տղամարդիկ կարող են հրաժարուել Հ. Հանրապետութեան հպատակութիւն ընդունելուց միայն զինուորական ծառայութիւնը աւարտելուց և կամ նրանից ազատուելուց յետոյ։

2. Հպատակութիւնը ընդունելուց հրաժարուող անձինք պարտաւոր են հեռանալ Հայաստանի Հանրապետութեան սահմաններից։ Հեռանալու ժամանակամիջոցը, գոյքերի լիկւիդացիայի կարգը, ինչպէս նաև այդ անձանց Հայաստանի սահմաններում մնալու թոյլտուութեան կանոնները, կորոշւի յատուկ օրէնքով։

3. Հայաստանի Հանրապետութեան հպատակ են ճանաչւում հայկական ծագում ունեցող այն անձինք, որոնք ծնուած են Միացեալ Հայաստանի տերիտորիայում, բայց այժմ ապրում են Հայաստանի սահմաններից դուրս։

Ծանօթութիւն. 1. Ներքին Գործերի Նախարարի թոյլտուութեամբ Հայաստանի Հանրապետութեան հպատակութիւնը կարող են ընդունել նաև ոչ հայ ծագում ունեցող այն անձինք, որոնց ծնողները կամ իրենք ծնուել են կամ մշտապէս ապրած են եղել Միացեալ Հայաստանի սահմաններում, բայց սոյն օրէնքի հրատարակելու ժամանակ գտնուած են եղել Հայաստանի սահմաններից դուրս, եթէ այդպիսիները սոյն օրէնքի հրատարակումից հինգ տարւայ ընթացքում Ներքին Գործերի Նախարարութեան ներկայացնեն յայտարարութիւն իրենց հպատակ արձանագրելու մասին։

4. Բոլոր հայ ծագում ունեցող օտար պետութեանց հպատակները և կամ այդ պետութեանց քաղաքացիութիւն ձեռք բերողները իրաւունք ունեն իրենց և կամ իրենց ոչ չափահաս երեխաների անունից սոյն օրէնքի հրատարակումից հինգ տարւայ ընթացքում յայտարարելու իրենց Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն ընդունելու մասին՝ ներկայացնելով այս առթիւ համապատասխան յայտարարութիւն երկու պետութիւնների ձեռնհաս հաստատութեանց»։

Հպատակութեան հարցը երկար բանակցութիւնների նիւթ դարձաւ և հայ-վրացական խորհրդաժողովում, որ 1920թ. ամառն էլ շարունակւեց։